



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1885 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Զ.

49 ՅՈՒՂԻՍ 1885



Կ. ՊՕԼԻՍ

1885

ԳԻՒԱՆՔ ԸՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՂԱՅ

ՄԱՅՐ ԳԻՒԱՆ

Տիգրան Լ. ֆէնտի Եռասուֆեան	Ա. Արեւ-դէր
Յովհաննէս » Թորոսեան	Բ. »
Յարութիւն » Թիրեաքեան	Գ. »
Յակօբ » Գուրգէն	Ա. Արեւ-դէր
Ասեփան » Տամատեան	Բ. »
Միհրան » Տէօքմէճեան	Գ. »

Չեռնաստրեան Գիւան

Մասթէոս Եգիս, Խղմբլեան Արեւ-դէր
 Գարեգին Վարդապետ Թաթարեան
 Միքայէլ Լ. ֆէնտի Մամիկոնեան

Դաստիարակութեան Գիւան

Գարրիէլ Լ. ֆ. Նորատունիկեան Արեւ-դէր
 Գասպար » Գասպարեան
 Մկրտիչ » Մէլգալուրեան

Կարուածոց Գիւան

Յովհաննէս Լ. ֆ. Թորոսեան Արեւ-դէր
 Միհրան » Զօպանեան
 Նշան » Պօյաճեան

Համարակալութեան Գիւան

Գառնիկ Լ. ֆ. Յովակիմեան Արեւ-դէր
 Կարապետ » Սըլանճրեան
 Մկրտիչ » Ճանճմեան

Յարաբերութեան Գիւան

Յովհաննէս Լ. ֆ. Նորեան Արեւ-դէր
 Համբարձում » Մաղպուլեան
 Ալէքէոս » Պէրպէրեան

Նախանուոնութեան Գիւան

Յարութիւն Լ. ֆ. Մէրեճմ. Գուլի Արեւ-դէր
 Յակօբ » Պօչնաքեան

Իրաւասութեան Իւան

Յովհաննէս Քհչ. Մկրեան Արեւ-դէր
 Յակօբ Լ. ֆէնտի Սըլակ
 Ղաղար » Հովտեան

Խմբագրութեան Գիւան

Կարապետ Լ. ֆ. Խիժիճեան Արեւ-դէր
 Մկրտիչ » Մէլիքեան
 Համբարձում » Ալաճաճեան

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄՆ 1885 ԱՄԻ

ՆԻՍ 2.

19 ՅՈՒԼԻՍ 1885

ՆԱԽԱԳԱՀ. — Սրբազան Պատրիարք Հայր.
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան Էֆէնտի Եւսուֆեան .

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. — Ատենական դործողութիւնք .
- Բ. — Առաջարկութիւն կրօն. ժողովոյ վասն Հաստատման մի Ընծայարանի .
- Գ. — Վերակազմութիւն Խորհրդարանական Յանձնաժողովոյ վասն պարտուց և գործոց Ս. Երուսաղէմի .

Ընդ նախադաշուիւսմի Ամեն. Ս. Պատրիարք Հօր, Ատենապետ Էֆէնտի ատեան կը բանայ ժամը 2 1/2 ին ի ներկայութեան 40 Երեսօխտանաց, որոց թիւն ի վերջէ կճի կը յանգի :

Վարչութեան կրօնական ժողովն, ինչպէս և նորակազմ Քաղ. ժողովն մեծամասնութեամբ ներկայ էին իրենց յատուկ սեղանին շուրջը :

Օ Ր Ա Կ Ա Ր Ա Գ

Ա.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1.

Բացակայութիւնք

Երեսօխտաններէն Տ. Գրիգոր Քաջանայ Աճէմեան և Տիգրան Էֆէնտի Սինանեան անձ.

նական ակարութեամբ, և Տ. Յակոբ Վարդապետ Աշտ ճանրորդութեամբ ժողովոյ այսօրեայ նիստէն բացակայ Յեպնին զրով հաղորդած լինելով Գիւտանին, Ատենապետ Էֆէնտի նոցա տնտեսներն, իրր օրինական բացակայք ժողովն հաղորդելով, որձանագրել կուտայ ի Տաւմարի ներկայութեան :

2.

Վարչացումն Գ. Էս. Գ. Յիսուերուս Ատենագրութեանց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — ժողովոյս երրորդ և Չորրորդ նիստերու ատենագրութիւնք ժամանակին տարագրուած և Երեսօխտան Տեարք բաշխուած լինելով, զայն Ձեր ջուկէն կ'ենթարկեմ կարգու :

Երրորդ նստի ատենագրութեան վրայ զի տողութիւն ընող կա՞յ :

ՓՆԿՐԵԱՆ Ա. ԷՖ. — Երրորդ նիստ. ՅԱրդ Երես, Բ. Սիւնակ « Ամենայն Հայոց Կաթողիկոսն 72 քուէովք ըսած եմ և ոչ թէ » 70 քուէովք : Ասի տպագրական սխալ մ'է :

Իսկ նոյն խօսքիս մէջ չէ արձանագրուած սա պարբերութիւնն « Այս ժողովս գո՞չ է կա տարուած ընտրութիւնն, բայց դառնանք և տեսնենք թէ Աղլն ու գո՞չ է » :

ՄԷՐԵԿԵՄ-ԳՈՂՈՎ Յ. ԷՖ. — Երրորդ նստի մէջ կը տեսնեմ թէ՛ Հալաճեան Բարսեղ է Ֆէնտի Ա. նստի Յրդ Երեսին մէջ իւր խօսքին « Խորքեր նկատուներ » բառերն ուղղեր է սա սէս . « Եթէ անձնական նկատուներ չկան և լին : Ուրեմն նոյն սրահուն իմ ըսած խօսքիս թերի մասն ալ սէտք է ուղղողանոց , սր էր . « Եթէ Հալաճեան էֆէնտի իւր խօսքին վերջին մասովն ինձ ակնարկել կ'ուզէ , կը խընդրեմ որ կամ իւր միտքն րայցայցուէ , և կամ այդ մութ խօսքերուն միջին խմաստն իրեն վերապահէ » :

Ասից դատ Թնկրեան էֆէնտի Գ. նստին մէջ Ուղերձի վիճարանութեան առթիւ իւր խօսքին թերի մէկ մասն կ'ուղղեր այժմ : Կը յիշեմ թէ նոյն օրն , ես՝ իրր Տեղեկարեր՝ պատասխանած եմ այն խօսքին , ըսելով թէ՛ « Աղլն իւր Երեսօրհանութեամբ ներկայացուեալ է այս ժողովոյն մէջ , և ժողովուրդը շատ լաւ գիտէ , որ իւր Երեսօրհաններն ընտրելով նոցա յանձնած է իւր ձայնն , և հետեւաբար երբէք ըմբոսացած չէ իւր Երեսօրհաններուն որսմանց դէմ . ուստի ձրի զըրպարտութիւն մը կը լինէր ըսել ժողովրդեան համար թէ՛ տարակարծիք կը գանտի իւր ընտրած Երեսօրհաններուն հետ : »

(Թնկրեան Աւետիս էֆէնտի կը վարձէ պատասխանել Մէրեկեմ-Գողով էֆէնտի . սա .

կայն Ատենագրու էֆ. յայտնելով թէ՛ Երեսօրհանն սը միայն իւր խօսից վրայ իրաւունք ունի զխտողութիւն ընելու և օրէն չէ՛ Ատենագրութեանց վաւերացման սրահուն՝ հարց և պատասխաններով ընդարձակ վիճարանութեանց դռներ բռնալ , թոյլ չտար նմա վերջուտին խօսք տունել :)

ՓԱՓԱՅԵԱՆ Ա. ԷՖ. — Երրորդ և Երրորդ նիստերու ատենագրութիւնը չեմ ստացած , թէ և կարեւոր զխտողութիւններ ալ ունիմ անոնց վրայ : Ուստի կը խնդրեմ Գիւտնէն որ ատենագրութիւններն ժամանակին մեր ձեռքը հասնելու համար հաճի հարկ կողմ յանձնարարութիւնն ընել որոց որ անկ է :

Ուրիւ զխտողութիւն ընող շինելով Ատենագրու էֆէնտի քաէի կը քնէ Երրորդ նստի Ատենագրութիւնն , որ կը նշուի ՈՂՈՎՈՒՆՆԻ Հանդերձ զխտողութեամբ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ Չորրորդ նստի Ատենագրութիւնն Ձեր ըսելին կ'ենթարկեմ . զխտողութիւն ընող կա՞յ :

ՊԷԿԵԱՆ Յ. ԷՖ. — Չորրորդ նստ. Երես 6 է , Ա. Սիւնակ , իմ խօսքիս մէջ « Երեսօրհան կը գտնեմ վիճարանութիւնը՝ սլխտի լինի օրն . թերցումը : »

Ուրիւ զխտողութիւն շինելով , Ատենագրու էֆէնտի նոյնպէս ժողովոյն վաւերացման կ'ենթարկէ Չորրորդ նստի ատենագրութիւնն , որ կը նշուի ՈՂՈՎՈՒՆՆԻ Հանդերձ զխտողութեամբ :

Ատենագրու էֆէնտի կ'ուզէ ժողովոյն վաւերացմանն ենթարկել 83 շրջանի Թ. ոչ նստի Ատենագրութիւնն ևս , որ նոյնպէս տպագրուած և կանխապէս Երեսօրհանաց բաշխուած էր : Սակայն նիտուելով որ ռմանք յԵրեսօրհանաց տարութիւն չեն ստացած նոյն

նախ Լսենագրութիւնն, ԿՈՐՈՇՈՒՆ յաջորդ
նախ թողուլ անոր վտերացումը :

3.

Երեսփոխանական հրատարակիր կարապետ
Է.Յ. Կիւրճեանի

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Յ. — Մեր պաշտօնակիցնե-
րէն Կիրճեան Կարապետ Էֆէնտիի կողմանէ
Երեսփոխանական հրատարակիր մը կոչ Գի-
ւանիս զրոյ, զոր կը լուծամ հաղորդել ժո-
ղովիդ :

Ամենայատիւ Ս. Պատրիարք Հայր
Նախագահ Աղղ. Կեղըր. Պատկ. Ժողովոյ,

Անձնական տկարութիւնս օր ըստ
օրէ ծանր կերպարան առնելով, պար-
տաւորեցայ բժշկաց խորհրդով երթալ
ի Ֆրանսա ի դարմանատարութիւն հի-
ւանդութեանս :

Ուստի կը խնդրեմ Ձեր Սրբազնու-
թեանէ և Պատկառելի Ժողովէն, որ նե-
րողամիտ լինիք այս բացակայութեան
համար, և ընդունիք հրատարականս որ
հակառակ դործելու փախդանացս՝ ըս-
տիպուած եմ մատուցանել :

Յուսամ թէ այս առթիւ արդարու-
թեան պարտք մը հասուցած կը լինիմ,
անդի տալով կարող անձի մը որ պիտի
դայ դործել ի սէր Աղղին, և ի պատիւ
հայրենեաց :

Մնամ համբուրիւ Այլոյդ Սրբազնութեան
Ամենախմոր՝ ծոռոյ Ձեր
Կ. Թ. Կիւրճեան

29 Յունիս 1885
Պեշիկթաշ

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Յ. — Ստուգիւ ցուայի է
Կիրճեան Էֆէնտիի վիճակը, որ աղիւ և

գործունեոյ անդամակից մի լինելով հանդերձ,
ենթակայ եղած հիւանդութեան պատճառաւ
հարկադրուած էր իւր ընտրութեան տուաջին
օրէն բայտից միակ ժողովս, և այսօր կու-
ղայ հրատարիլ Երեսփոխանութենէ, բժշկաց
խորհրդովն ի դարման հիւանդութեան Ֆրան-
սա երթալու պարտաւորեալ լինելով : Ժո-
ղովի լինչ կարծիք ունի այն հրատարականի
մասին :

ՂԱԶՍՏՈՒՍԵԱՆ Ք. Է.Յ. — Պէտք է ընդու-
նիլ այդ հրատարականն, որպէս զի ուրիշ մը
յաջորդէ իրեն : Երբ Աստուած բժշկութիւն
չնորհէ մեր ազնիւ պաշտօնակիցին, անշուշտ
վերստին կ'ընտրուի :

Ատենապետ Էֆէնտի առ այս վերստին
Ժողովոյ կամաց կը դիմէ, որ ԿԸՆԳՈՒՆԻ
ՉՏԱՐԱԿԱՆ Կարապետ Էֆէնտի Կիրճեանի :

4.

Յայտարարութիւն յ'Ատենապետ և Երեսփոխան
Քաղ. Ժողովոյ

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Յ. — Նուրեան Էֆէնտի,
իւր Ատենապետ նորակազմ Քաղաքական Ժո-
ղովոյ, խօսք ուղած է : Ուստի Օրակարգի շան-
ցած, Գիւանս կը հրախրէ զնա խօսք տոնուլ :

ՆՈՒՐԵԱՆ Յ. Է.Յ. — (Ատենապետ Քաղ-
ժողովոյ) Տեսքը Երեսփոխանը. — Ազգային
Կեղըր, Վարչութեան Քաղաքական Ժողովն իւր
անդամոց մեծագոյն մասին յանձնառութեամ-
բը յաջողեցաւ կոտորել իւր կազմութիւնն
և արդէն իսկ ընտրելով իւր Գիւանս Երիւ-
զարթի օրէ ի վեր գործի սկսած է :

Յանուն նորակազմ Ժողովոյ, կը փու-
թամ յայտնել առ Պատկ. Աղղալին Երեսփո-
խանութիւնը՝ մեր խօրին երախտապարտու-
թիւնն այն վատահոլութեան համար՝ որով ու-

ղեկեր զվեզ պատուել այսպիսի կարևոր սրշտանի կոչելով գլեղ : Մեր քաղաքը կլտ նպատակի պիտի ունենան համապատասխանել այդ վատահավեան : ապա՛հով ենք որ մեր աշխատութիւնն ապարդիւն չպիտի լինայ, վասն զի կոչուած ենք բարերարդարար Եղիշեղու Սըրբազան Հօր մը՝ որ իւր Պատրիարքական բարձր Գահին վրայէն յայտարարեց այդչէն թէ ինչ կը փախարի բնէլ յօղուտ ընդհանուրին, և որուն իմաստութիւնը, խոհակամտութիւնն և անձնութեան թիւերը զերծ են ամեն կասկածէ և վեր յ'ամեն գ-վեստիւր :

Վատահ կեր, կը կրկնեմ, որ անօգուտ չպիտի լինայ մեր պատասխանութիւնը, վասն զի քաղաքայն ենք որ Պատի. Ժողովը զվեզ կըրկնակի հրաւերով այդ փախուկ պաշտօնին կոչելէ յետոյ, պիտի յօժարի շարունակել առ մեզ իւր թանկագին վատահավեանն որ մեր առաջին նեցուկը պիտի լինի մեր պաշտօնավարութեան մէջ :

Սա ալ պարտաւոր ենք աւելցնելու, Տեալք Երեւոյնս, որ ամեն անգամ որ պիտի կոչուիր դատելու Ձեր կողմած Վարչութեան արարքը, պիտի համիր աչքէ հետ չպահել առ կարևոր պարագայն թէ՛ այդ մարմինն հրաւիրուած է այսօր գործելու այնպիսի օրինական դրութեան մը ներքե՛ որուն վերաբնութեան հարին սկզբամբ ընդունած է Ազգն և նոյն խի մեք՝ որ պատիւ ունինք զինքը ներկայացնելու, և թէ՛ երբ խնդիրը կը կարանայ Ազգային կենսական շահաց արհ. պատմութեան և զարգացմանը վրայ, ձեռք բերուած արդիւնքը վեր պիտի դառնի ձեռակերպութեանց կնիւնին :

ՄԵՐՆԵՄ-ԳՈՒՈՒԻ Յ. ԷՃ. — Շնորհակալ

ենք մեր նորընտիր Քաղաքական Ժողովէն որ իւր պաշտօնավարութեան ունենալիք ուզուութիւնն, թէ՛ և համառօտիւ, անկեղծօրէն կը գծէ մեր առջև, և չի վարանիր ըսելու թէ՛ ինք կոչուած լինելով գործել այնպիսի օրինական դրութեան մը ներքե՛ որուն վերաբնութեան

թեան հարին սկզբամբ ընդունուած է և Օրոք կարգի խնդիր եղած, երբ զայ պարագայ յարմ Ազգային բարձրագոյն շահաց արհ. պատման հարին ստիպէ, պիտի պարտաւորի օրինական ձեռակերպութեանց նախադասութիւն չընծայել : Այս յայտարարութիւնը կը հոսկրամբ այնպէս որպէս պարտիք հասնիալ իւր պաշտօնին պատասխանութեանց զխտակցութիւն ունեցող ձեռնհաս և վատահավեան մարմնաց մը կողմէ կեամ յայտարարութիւն մը :

Վերաբնութեան գործին մէջ մեր Քաղաքական Ժողովը ալ մեծ դեր ունի, նա կարող է մեծապէս զխրացնել մեզ վերաբընդ նախեան խնդիրը : Տարակոյս չկոյ թէ երբ Ազգային Վարչութիւն և Երեւոյնս Երեւոյնս Երեւոյնս պատկերի իրարու, յայնժամ Սո՛ժանագրութեան վերաբնութիւնն ալ քիչ միջոցի մէջ ի գլուխ կեղծէ, և մեր Վարչութիւնը չիչ անգամ կը հանդիպի արդի բացասիկ վիճակին օրինական դժուարութեանց :

Ես վատահ եմ նորընտիր Քաղաքական Ժողովը կողմող տարեաց վրայ թէ խոջի մտք պիտի վարեն իրենց պաշտօնն Ազգային շահաց պաշտօնավարութեան նկատմամբ, և հետևարար Երեւոյնս Երեւոյնս կնիւններու չպիտի բազմի Վարչութեան հետ ունենալիք յարաբերութեանցը մէջ :

Ուրեմն ես և ընդ իս բողոքով իւր Երեւոյնս Երեւոյնս զո՛հ և շնորհակալ ենք Քաղաքական Ժողովէն և բաջարցոյ ենք թէ այս Քաղաքական Ժողովը պաշտօնավարութեան շարժանին մէջ պիտի կարենանք յաջողութեամբ ի գլուխ հանել Ազգ. Սո՛ժանագրութեան վերաբնութեան կարևոր գործը :

ՁԱՅՆՆԵՐ. — Կը ձայնակցինք Մէրեմ —

Գոյի ԷՔի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Քաղաքական Ժո-

ղովը յայտարարութեանն այնպէս կերելի թէ՛ նորեան էՔէնտի պատասխանատու պիտի կունդի այս Ժողովին մէջ Վարչութեան ուշ-

զրուած հարցմանց և կամ, եթէ հարկեցուցիչ պարտագայ մը ստիպէ զինքը բացակայիլ իւր կողմէ ներկայացուցիչ մը սխալ կողմէ : Այս դրոձիւնը չզործադրուելուն համար էր որ նախորդ շրջաններու մէջ ցուայի միջոցէտեմբեր աւելցանք և նիստեր եղան յորս Քաղաքական Ժողովոյ կողմէ զէթ մէկ անդամ վնասեցինք բացատրութիւն մ'առնելու համար ու չզըտանք :

Աստի կը վաճարինք որ, ինչպէս նիստն կը բացուի ընդ նախագահութեամբ Ս. Պատրարքի Հօր և Ատենապետին, նոյնպէս և կրօնական ու Քաղաքական Ժողովներն ևս կանոնադրապէս իրենց ներկայացուցիչներն ունենան այս Ժողովոյ մէջ, վասն զի, պէտք է զիտնու թէ՛ Վարչութեան բացակայութեամբ, սրբամտարարութեան խնդիր կը ծագի Երեսօրհանութեան համար և այդ խնդիր է որ, ինչպէս ըսի, յաճախ յազում է զմեզ և միջոցէտեմբերու առիթ տուած :

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Հարկ է զիտնուլ : Տեարք, թէ կրօնական Ժողովն ընտրուած օրէն ի վեր իւր Գեր. Ատենապետն, Տ. Խորէն Արքեպիսկոպոստոսիցի կորզում է Երեսօրհանութեանդ տաջն, որ զժրատըարար երկու նիստերէ ի վեր է ներկայ չգտնուիր :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ատի կրօնական Ժողովոյ մտածելիք բանն է :

ՆՈՐԻՅԱՆ Յ. ԷՖ. — (Ատենապետ Բաղ. Ժողովոյ) Մեզի համար չէ թէ պարտականութիւն, այլ իրաւունք մը սխալ համարինք ամեն անգամ ներկայ գտնուիլ Ժողովոյ, նոր ոյժ ստնուլ, ոյժ սուլ, հարգողել խնդրուած բացատրութիւններն, հասկնալ Ազգին կամքը :

ՋԱՆԵՐ. — Ենթադրաւ չ'ը. զոչսուցուցիչ է Ձեր այդ յայտարարութիւնը :

5.

Պայտնագիր Ս. Պատրիարք Հօր յազում վերաբնութեան Ազգային Սահմանադրութեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ս. Պատրիարք Հօր կողմանէ ևս պաշտօնագիր մը կոյ նիստին վրայ զոր կը վաճարէ հարգողել Ժողովոյ :

Ձայս ստեղծ, Ատենապետ էֆէնտի կը հրաւիրէ զԱտենապետ էֆէնտի ընթեռնուլ նոյն պաշտօնագիրը :

Վ. ԵՄԻՆՆԱՆՔ ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖէնտի Ազգ. Երեսօրհանական Ժողովոյ

Պատուաւժան Դիւանիդ. միջոցաւ մնասուցինք արգէն Ազգ. Երեսօրհանական Ժողովին մեր ջերմ շնորհակալութիւնն և զօհուհանութիւնն այն ուղերձին համար, զոր Ազգային Ժողովն իւր ներկայ նստաըջանին բացմանն առթիւ հաճեր էր մեզ ուղղել, և որ ի իւր ազգասիրական ըրձից և իմաստուն խորհրդոյ արտայայտութիւններով կատարողէր կեդրոնական Վարչութեան իւր աջակցութիւնն :

Նոյն ուղերձին մէջ Երեսօրհանական Պատկառելի Ժողովն Սահմանադրութեան ինչ ինչ տրամադրութեանց վերաբնութեան պէտքն ևս յիշատակած և յայն ձեռնարկելու ժամն հասած համարելով յանձնած էր մեզ ինդիլին ի յանդհանելու համար հարկ եղած ձեռնարկութիւնն ընել ըստ օրինի և շրջապահաց խոհակախօսութեամբ : Ազգային Ժողովոյ այն բաղձանաց և նոյն խնդիր Սահմանադրութեան ԳԾԻԻ յօդուածին տրամադրութեան համաձայն այս քննութիւն

նը կոտորելու համար հարկ լինելով Յանձնաժողով մն կազմել, արժան գաւտեցոք առաջարկելը Պատկաղելի ժողովոյդ որ հաճի ձեռնարկել նոյն Յանձնաժողովոյ կազմութեան, որպէս զի աճոր միջոցաւ սահմանուին փորձառութեամբ կարևոր դատուած փոփոխութիւններն, անփոխելի պահուելով հիմնական սկզբունքներն, ինչպէս նոյն իսկ Սահմանադրութիւնն բացորոշակի կը տըրամագրէ, և սահմանեալ փոփոխութիւնք Աղղ. Երևսփոխանական ժողովոյ քննութեան և վաւերացման բովին անցնելէ յետոյ՝ ներկայացուին Բ. Գրան, և գործադրութիւն ըստ կայսերական հրամանի :

Մեամբ աղօթարար

Պ. Կ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿ.

18 Յուլիս 1885

Կ. Պօլիս

(Յեք շէֆէրցմտ)

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՅ. — Այդ կարևոր խնդրոյն վրայ նոյնիմաստ առաջարկ մը ևս ևս պատրաստած էի, սակայն բանի որ Ս. Պատրիարք Հայրն իւր կողմանէ նախաձեռնութիւն կուտայ յայդմ, այլ ևս հարկ չեմ տեսներ նոյնն կրկնելու և կը շատանամ ձայնակցելով նորին Քարմը Սրբաքննութեան առաջարկին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ինչպէս Քաղաքական Ժողովոյ Վսեմ. Ասեկնայեա Էֆ.ի յայտարարութիւնէն ոչ տեսնուցու, Սահմանադրութեան վերաքննութեան հարկն զգալի է և Ս. Պատրիարք Հօր առաջարկն, որ այդ հարկն կզգացնէ, կանցնի, ըստ օրինի, մեր յաջորդ նստի Օրակարգն որդիս զի վերաքննութեան գործով իրաւ ընու համար առաջարկեալ Յանձնաժողովն ընտրուի և խօղիլը գործնական ձաթառ մէջ մտնէ իսկոյն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՅ. — Սահմանադրութեան մէջ այդ կէտն որոշակի դնուած է արդէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Այս, լայց ըստ օրինի, Յանձնաժողովն ընտրութեան խնդիրն հարկ է որ անցնի յաջորդ նստի Օրակարգին մէջ :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՅ. — Ս. Պատրիարք Հօր բերած առաջարկն, և թէ չեմ սխալի, Սահմանադրութեան ընդհանուր վերաքննութեան կը վերաբերի :

Արդևորուազոյն չէ՞ր լինել որ Վարչութեան Ս. Նախագահն փոխանակ ընդհանուր վերաքննութիւն պահանջելու, որոշակի ցոյց տար Սահմանադրութեան այն յօդուածներն միայն, որոց գործադրութիւնը, փորձով հաստատուած է թէ դժուարութեանց կը հանդիպի: Վասն զի թէ և որիք անգամներ ալ Սահմանադրութիւնը ամբողջովին վերաքննելու ձեւերակներ եղած ենպա ժողովոյ մէջ, ասկայն ամեն անգամուն ալ իրականութիւն չեն դուած այդ ձեւերակներն :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Գալ նստին երբ խնդիրը Օրակարգն անցնի, յայնամ միայն Մէլիքեան էֆէնտի կրնայ ընել իւր այդ զիտողութիւնն և ոչ թէ այժմ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՅ. — Ես կը ձայնակցիմ Մէլիքեան էֆէնտի առաջարկութեան :

ՄԷՐԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Իբրևուրք ուրի Մէլիքեան էֆէնտի, երբ կը փախաքի զիտնայ Սահմանադրութեան վերաքննելի տըրամադրութեանց նկատմամբ Վարչութեան կարծիքն, և արդէն ժողովն ալ, վերաքննին Յանձնաժողովն ընտրութիւնն Օրակարգն անցնելով, կարծեմ թէ մի և նոյն ձանրուն մէջն է, վասն զի այդ Յանձնաժողովն մեծաւ մասամբ Վարչութեան ներկայացուցիչներով

պիտի կազմուի, որ Սահմանադրութեան մե-
րաքննելի կէտերուն նկատմամբ Վարչութեան
կարծիքն ու աստուծոյն հրէ պիտի յայտնեն,
և թե երևա Յանձնաժողովն ալ նախապէս
պիտի ներկայէ Ազդ. Ժողովուս վերաքննելի
նկատուած կէտերն :

Հետեւաբար, Մէլիքեան էֆէնտիի ցոյց
տուած ճանքին պիտի անցնինք անպատճառ,
այլ ո՛չ այսօր :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐՅԱԶԱՆ. — Արդէն առա-
ջարկութեանս մէջ զինչ ինչ կէտերս ըսուած
է, եւ ոչ թէ՛ ընդհանուր, որք պիտի ըսցա-
տուին, երբ խնդիրը վիճարանութեան դուռի:
Արդէն, առ այժմ ամբողջ Սահմանադրութեան
վերաքննութեամբ զրազելու ժամանակն ալ
չէ :

Ես գո՛հ եմ որ ազնիւ Երեսփոխանութիւնդ
իւր բաղմամբայ փորձառութեամբ զգացած է
այդ պէտքն եւ լուրջ կարեւորութիւն կու-
տայ խնդրոյն : Իրաւ է թէ՛ մասնակի քննու-
թիւններ կատարուած են մերթ ընդ մերթ,
սակայն ասոնք մճռական հանգամանք չունին,
քանի որ Կոյսերական Կառավարութեան հաս-
տատման չեն ենթարկուած ըստ արամարու-
թեան Սահմանադրութեան ԳՅրդ յօդուածոյ :

Այս դօրծը կարի սովորական է. Վար-
չութիւնը իւր առօրեայ ընթացքին մէջ զլժ-
ուարութեանց կը պատահի շարունակ, մինչ-
դեռ սովորականէն աւելի արագ դործելու
պէտք ունի, վասն զի պէտք է դիտնաք, Ե-
րեսփոխան Տեաքք, որ երեք չորս եւ մինչեւ
իսկ հինգ վեց տարիէ ի վեր զիջուած մնա-
ցած խնդիրներ ունինք, և եթէ ասոնք մի-
այն կարենամք լուծել, մեծ դործ մը կտա-
րած կըլլանք . . . :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — (Ընդմիջելով)
Վե՛ց տարիէ ի վեր զիջուած խնդիրներ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐՅԱԶԱՆ. — (Պատասխա-
նելով) Այո՛, Առաջնորդական և Գաւառական
խնդիրներ, որք 5-6 տարիներէ ի վեր բարձի-
թողի եղած են և իրենց լուծման կապանն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Լա՛ւ պէտք է
արձանագրել Ս. Պատրիարք Զօր սոյն յարա-
բարութիւնը :

ԱՏՆԵԱՊԵՏ ԷՃ. — Լեցիք նաև մեր Ս.
Նախարարն յայտարարութիւնն, որով խնդիրն
Սրահարզն անցնելու մասին Ինքն ալ կամք կը
յայտնէ, Հետեւաբար, ինչպէ՛ս ըսի, այս խըն-
դիրն կանցնի յաջորդ նախ օրակապել մէջ :

Յառնուստ Երեսփոխանք ձայնակցելով
Առնանպետ էֆէնտիի ի մասին Ս. Պատ-
րիարք Զօր առաջարկութեան, ԿՈՒՐՈՒԻ
յաջորդ նախ Սրահարզն անցնել Ազդ. Սահ-
մանադրութեան վերաքննութեան խնդիրն :

6.

Տեղեկագիր համարատուութեան Ազգային
Կեդր. Վարչութեան կրօն. Ժողովոյ

ԱՏՆԵԱՊԵՏ ԷՃ. — Առնական զօրծ-
ղութեանց կարգին մէջ տնինք նաև Վարչու-
թեան Կրօնական Ժողովոյ միամտոյ համարու-
տութեան տեղեկագիրն : Կուզե՛ք Ժողովը
սոյն տեղեկագիր յըլլ Նախաձեռնութեան
Դիւանին :

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Բ. ԷՃ. — Պէտք է խնդ-
րոց կարգն անցնել այդ տեղեկագիրը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Թէ՛ւ օրէնքն կը
պահանջէ որ այդ տեղեկագիրն նախ երկուց
ձեռնչառ Գրեանին նախարանութեան. բայց
որովհետև այդ ես ժամանակն անցած է, ուստի
կտառջարկեմ անցնել զայն յաջորդ նախ
Սրահարզի մէջ :

Այս առիթիւ Հարկ կը համարիմ նաև յիշ-
ցնել թէ՛ Վարչութեան Գաղարկական Ժողովն
իւր համարատուութիւնն տակախէ չէ ներկա-
յայտուցած Ժողովոյն, և եթէ աստիճան յատար-
չ

այն, վարչութիւնը պատասխանատու պիտի լինայ:

ՊՇԵՆԱԿԵԱՆ Յ. ԷՖ. — Կոստանդնուսի վեհաժողովի անդամներէն Չերազ Մինաս էֆէնդի կրօնականութեան վեհաժողովի անդամ ընտրուելու համար ինչ նոր ընտրութիւն կատարել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Առ Պոզնանկեան էփ.) Այդ ընտրութիւնն յաջորդ նստին կը կատարուի:

Այժմ, Տեաքը, կ'ուզէ՞ք կրօնական ժողովոյ Համարատուութիւնն անցնել յաջորդ նստի Օրակարգը:

ՋԱՅՆԵՐ. — Այո՛:

Հետեւաբար ժողովն կ'որոշէ յաջորդ նստին Օրակարգն անցնել կրօնական ժողովոյ Համարատուութիւնն:

Մ Ի Զ Ա Պ Է Պ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէեւ Ընծայարանի խնդիրն մեր Օրակարգի առաջին խնդիրն է, սակայն Դեւանն նկատելով որ այս խնդիրը բաւական երկար վիճարարութեանց դռներ պիտի բանայ եւ թերեւս այս նստին ալ խոր լուծուիլը չգտնէ, կ'առաջարկէ առաջնութիւն տալ երեսուցից Գանձաժողովոյ վերահաշիւութեանը, որ կէս ժամու գործ է, մնաւածներ թէ Ս. Պատրիարքը Հայրն եւս համաձայն է Դեւանիս տոյն առաջարկութեան:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ նոյն խնդրոյ այդ Ընծայարանի ժողովին նորակազմ Գաղարակական ժողովին յղենք եւ անոր կարծիքն ալ տանք յետոյ վիճարարինք:

ՍՐԱՎԱԶԵԱՆ Կ. ԷՖ. — Քանի որ խնդիրն Օրակարգի մէջն է եւ Համարակալութեան ու

Նախաձեռնութեան Դեւաններն եւս առ այս խնդրոյ տեղեկագրերն նախագէտ աւանդած են Դեւանին, ուստի, կարծեմ հարկ է նախ խնդիրը ձեռք առնուլ, եւ երբ վիճարարութեան պահուն, կրօն. ժողովոյ այդ առաջարկն նորակազմ Գաղարակական ժողովոյ յղելու հարկն երեւան դայ, յայնժամ յղենք:

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Կը ձայնակցիմ Սրավազեան էֆէնդիի առաջարկութեան:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — (Ատենապետ կրօնական ժողովոյ) կրօնական ժողովն բերած է յատենի Պատկ. ժողովոյ այդ առաջարկութեան գիրն, որ միամտեայ պարմանաժամու անցուցած է Օրակարգին մէջ, եւ արդէն այդ պայմանաժամն ալ շատոնց լրացած է: Հետեւաբար այդ տեսակ յետաձգումներ չենք կրնար ընդունիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծեմ Խորէն Աբարաղան մտալ ը'րանեց Դեւանիս առաջարկն: Մեր շտաբը թէ յետաձգուի Ընծայարանի խնդիրն, այլ միայն՝ առաջնութիւն տալ երեսուցից Գանձաժողովոյ կողմէն է, որ կէս ժամու գործ է: մինչդեռ կրօն. ժողովոյ առաջարկն կրնայ ժողովոյս մի քանի նխտերն գրաւել:

ՋԱՅՆԵՐ. — Շատ լու՛ւ, շատ լու՛ւ:

Երեսուցից Գանձաժողովոյ կողմէն ձայնակցելով Դեւանի այն առաջարկութեան, ըստ այնմ՝ կ'որոշուի նախ ձեռք առնուլ երեսուցից Գանձաժողովոյ վերահաշիւութեան խնդիրն եւ որպէս անցնել Ընծայարանի խնդրոյն:

Բ.

Վերակազմութիւն Խորնորդարանական Գանձաժողովոյ վասն պարտոց եւ գործոց Ս. երեսուցիցի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կերևի վարչութեան պաշտօնողներ, նախորդ Գաղարակական

ժողովոյ կողմանէ Երուսաղիմոյ սպարապետ ինտրոյն ասթիւ Յանձնաժողով մը կողմուած էր Եւսանդամներէ: Ստիպոյն ժողովը իր անցեալ նշանոյն մէջ այդ Հինգ անուանոյ վրայ ուղերւոյ յաւելու համար երկու անձ և այսպէս վերահասցնել նոյն Յանձնաժողովն, առ այս՝ յանձնարարեց Յիւստին՝ սատարատեղ եօթնամեան ընտրեցեաց սրբազրեղի ցանկ մը, որոյն մէջէն ժողովը ազատելու անուան ջնջելով ուրիշ մը նշանակել:

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Ոչ թէ սրբազրեղի, այլ կարծեմ զեղջելի երկպատիկ ցանկ պիտի գտար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Զեղջելի ցանկն միայն վարչութեան ընտրութեան համար կուգայ, իսկ սրբազրեղի ցանկն Յանձնաժողովոյ ընտրութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թէ ինչ կը տրամադրէ այս մասին մեր ներքին կանոնադրին, ահաւասիկ, (կընթեանաւ ներքին կանոնադրի կրթ. յօդուածն): Որքան ըստ սոյսմ տրամադրութեան, ցանկն սրբազրեղի է և ոչ թէ զեղջելի:

ԹԻՐԵԱՔԵԱՆ Յ. ԷՖ. — Ըսել է թէ նոյն օրը Յիւստին շեր յիշէր օրինաց այդ տրամադրութիւնն և ժողովոյ որոշումն վերջն յիշեց:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես պիտի ընդունիմ այդ ցանկն, սակայն կառաջարկեմ բուժարկութենէ առաջ Հինգ տասն վոյրիեան գողար տալ, որպէս զի Երեսփոխանը կարենան համաձայնութիւն գոյացնել իրենց մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը յիշէր անշուշտ, Տեառք, թէ ես էի որ Յանձնաժողովոյ անգամոյ վերակառուութեան պէտքն յիշեցուցի:

այն օր, և սոյոք թէ երկպատիկ ցանկն առաջարկութիւն եղաւ թէպէտ, սակայն ես ըսի թէ այդ ընտրութիւնն օրինաց տրամադրութեան համաձայն պէտք է կատարուի: Եւ գոհ եմ որ այս սպարապետ մէջ օրէնքը սրբազրեղի ցանկ կը տրամադրէ, որով ազատ են բոլոր ընտրողը ուղածինն ընտրելու. բանի որ փորձով տեսած ենք թէ շատ դժուար է զեղջելի ցանկ մը սատարատեղ:

Իսկ Ղազարոսեան էֆէնտիի առաջարկութիւնն խիստ բանաւոր կը համարիմ և հետեալոր տասն վոյրիեանի համար Ատեանն փակուած կը յայտարարեմ, որպէս զի Յանձնաժողովոյ անգամոյ ընտրութեանն մասին Երեսփոխանը կարենան համաձայնիլ իրենց մէջ:

(Տասն վայրկեանի դադարէն յետոյ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատեանն բացուած է վերատին: Ուստի ըստ օրինի նախ սոյն ցանկն իւր ամբողջութեամբ Զեր ջուէին կենթարկեմ:

ԻԶՄԻՐԼԵԱՆ Տ. Մ. ԵՊԻՍ. — Ցանկի մասին Յիւստինը ուշադրութիւնն կը հրաւիրեմ: Անցեալ նստին հարկ եղած բացատրութիւններն տալով Յանձնաժողովոյն գործառնութեանց մասին, առաջարկեցի կոչել զսոյն « Խորհրդարանական Յանձնաժողով » և Աղգային ժողովը ալ ընդունեց իմ այս առաջարկն: Սակայն այսօր կը տեսնեմ որ նախկին անուան նոյն մնացեալ է Յիւստին կողմանէ ստորատեսալ ցանկին զլուսը, և կերևի թէ մտապարտեան աղբիւր է այս պարզապէս: Ուստի ես գործեալ կառաջարկեմ « Խորհրդարանական Յանձնաժողով » անուանել ընտրելի Յանձնախումբը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդէն ժողովոյ որոշումն է « Խորհրդարանական Յանձնաժողով » Երուսաղիմոյ սպարապետ (և գործոց) անուանել կաղբիւր Յանձնախումբն. սակայն և այնպէս կը խոստովանիմ թէ ցանկն սատարատեղ:

Թեանն առթիւ այդ սխալն անուշադրութեամբ
և իմ հոգմանէս տեղի ունեցաւ : Հետևարար
այժմ կը սրբազրեմ՝ այն յայտարարութեամբ :

Չայտ ստեղծի, Ատենայտեա Էֆէնտի Դի-
ւանի կողմանէ արտարատեալ տպագիր ցան-
կերն Երեսփոխանաց բաշխել կուտայ և վի-
ճակաւ քուէարկութեան բննիչ կը կարգէ՝

- Գարեգին Վարդայեա Թոթարեան
- Միհրաչ Էֆէնտի Չօպրանեան
- Աւետիս » Թնկրեան
- Մկրտիչ » Մէլիբեան
- Միհրան » Տէօբաճեան

(Թիւ քուէարկուաց 46)

Քուէարկութիւն ու քուէհամարն կատար-
ուելով, ասոնց արդիւնքն կը յայտնէ թէ՛ կ՞
քուէարկուաց քուէներէն ստացեր են՝

- 1 Յարութիւն Էֆ. Մէրեչիմ-Գուլի քուէ 44
- 2 Յովհաննէս » Նուրեան » 41
- 3 Մատթէոս Եպիս. Իզմիրեան » 37
- 4 Աւուհ Էֆ. Մաքսուտեան » 36
- 5 Կարայեա » Սըվաճեան » 32
- 6 Սենեբերիմ » Մանուկեան » 29
- 7 Համադասպ » Պալարեան » 28

Ատենայտեա Էֆէնտի քուէարկութեան
այն արդիւնքն յայտարարելով, ըստ այնմ
Երուսաղէմի Խորհրդարանական Յանձնաժողո-
ւոյ անդամ կը ՀիւՋԱԿԷ վերոյնշանակեալ եղբն
անձինքը որք բացարձակ առուելութեամբ
ընտրուած էին :

Գ.

Առաջարկութիւն կրօն. ժողովոյ վասն
հաստատման մի Բնծայարանի .

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՅԻ. — Այժմ ձեռք կառ-
նուած մեր Օրակարգի երրորդ խնդիրն, որ է՝

(*) « Առաջարկութիւն կրօն. ժողովոյ ի մասին
հաստատման մի Բնծայարանի » Այս խնդիրն,
ինչպէս կը յիշենք, ժամանակին ժողովոյս
ներկայացած և անոր Համարակալութեան և
Նախաձեռնութեան Դիւանաց յուրած է, որոյ
տեղեկագիրք նոյնպէս աւանդեալ են Դիւանիս :
Ուստի առ այս կը հրաւիրեմ զերեսփոխան
Տեառս խօսք առնուլ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅԻ. — Մենք այդ խն-
դիրը չենք սերտած տակաւին, մասն զի Բն-
ծայարանի հաստատութեան ծրագիրը տպեալ
չէ բաժնուած երեսփոխանաց : Ուստի կա-
ռաջարկեմ խնդիրն յետաձգել, մինչև որ այդ
ծրագիրն տպագրեալ երեսփոխանաց բաշխուի :

ԱՍՏՆԱՊԵՏ ԷՅԻ. — (Առ Ղազարոսեան
էՅԻ.) Այդ ծրագիրն ժամանակին Նախաձեռ-
նութեան և Համարակալութեան Դիւանաց յըղ-
ուելով, տեղեկագիրք հաս եկած և ստեղծա-
գրութեանց մէջ ալ արձանագրուած են Բոյց
որովհետև դուք նոյն միջոցին հիւանդ էիք,
կերևի թէ տեղեկութիւն չուսիր ոչ ծրագրէն
և ոչ ալ Դիւանաց տեղեկագրերէն :

ՃԱՆՐԱՄԵԱՆ Մ. ԷՅԻ. — (Անգամ Համա-
րակալութեան Դիւանի) Ինչպէս գիտէք, ժո-
ղովք Բնծայարանի հաստատութեան ծրագիրը
Նախաձեռնութեան և Համարակալութեան
միացեալ Դիւանաց զրկեց ի բնութիւն : Կա-
զամ յայտարարել թէ՛ Նախաձեռնութեան
Դիւանը՝ ծրագրի բնութեան պահանջն՝ սյա-
տիւ չըբաւ Համարակալութեան Դիւանին,
դոյն եւս հրաւիրելով, և զարմնօք կը տես-
նեմ որ Սըվաճեան Էֆ. իրր Համարակալու-
թեան Դիւան՝ առանձինն տեղեկագիր բերած
է : Ես իրր Համարակալութեան Դիւանի ան-
դամ կը բողբեմ իւր այդ արարքին դէմ և ան-
ընդունելի կը գտնեմ նորա առանձինն բերած
տեղեկագիրը :

(*) Տես Ատենայտեալութիւն շրջանի 1888 թվի
Նիստ ժէ.

ՍՐՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — (Նախորդ Ատե-
հապետ Համար Գիւսաքի) Հարկ է գրանալ
թէ այն ծրագրի բնութեան սրահուն մենք
մի անգամ հրաւիրեցինք ձանրմեան էֆէն-
տին, բայց նա չեկաւ, և որովհետեւ նա
խաձեռնութեան Գիւսանն խը տեղեկագիրն
աւանդած էր ժողովոյդ, և ատի մենք ալ մեր
միւս արտօնակցին, այն է Յովակիմեան
Գառնիկ էֆ.ի հետ խորհրդակցութեամբ մեր
տեղեկագիրն սրատրաստեցինք ու բերինք :

ՃԱՆՐԱԾԵԱՆ Մ ԷՖ. — Սրովածեան էֆ.ի
այս յայտարարութիւնը ստաց չէ՛, որովհետեւ
այն միջոցին Յովակիմեան էֆէնտի Պօլսէն
բացայայտ էր: Ես կը պնդեմ թէ Համարակա-
լութեան Գիւսանի այդ տեղեկագիրն առանց
միւս անդամակցաց մասնակցութեան չիտուած
է, ուրեմն և անընդունելի է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Համարակալութեան
Գիւսանի անդամներէն որոնք որ Համակործիր
չեն տեղեկագրին պարտաւարութեան, պար-
տաւոր են իրենց կարծիքն մասնաւոր տեղե-
կագրով մը կամ բերանացի յայտնել ժողո-
վոյս. հետևապէս ձանրմեան և Սրովածեան
էֆէնտիներու մէջ եղած խնդիրն ժողովս չի
կրնար զրագեցնել :

ՍՐՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ես կը ցատիմ որ
ձանրմեան էֆ.ի նման խաչուն երեսփոխան
մը այս օրինակ խնդիրներ յուզելու կեննէ,
և կը հրաւիրեմ զինքն որ երթայ հարցնէ
Յովակիմեան էֆէնտի թէ՛ այս տեղեկագիրն
իրեն հետ խորհրդակցութեամբ թէ՛ առան-
ձինն սրատրաստած եմ :

Գտնով Նախաձեռնութեան Գիւսանի կող-
մանէ զմեզ չհրաւիրելու մասին ձանրմեան
էֆէնտիի աւարկութեանց, բողոքովն անտեղի
կը գտնեմ զայնս. վասն զի այդ Գիւսանն քնու
զմեզ հրաւիրելու պարտաւորեալ չէր, զի մեր
Գիւսանին պաշտօնն է միայն խնդրոյն զրամս-
կան մասը բննել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Բնական է որ եւ
կեղեցականաց դասարարութեան հոգ տա-
նելու համար, դպրացի պէտք կայ և դպրոցը
զրամով կը հաստատուի: Հեռաւարտ այս
խնդրոյն մէջ ուշադրութեան առնուեցիր առա-
ջին կէտն է հասցիքի միջոցը: Համարակա-
լութեան Գիւսանն անպատեհ գտեր է Պօլսոյ
եկեղեցեաց հասցիքէն 0/0 3 անոնը առա-
ջորին: Ուստի, ինչպէս քիչ մ'առաջ ըսի,
հարկ է խնդիրն Գաղաթական ժողովին յղել
այս մասին Նորա կարծիքն իմանալու համար:
Եթէ նա ալ հասցիքից 0/0 3ը առնուլ անկա-
րելի է ըլլէ, այն ստեղծ մեզ կը մնայ ուրիշ
միջոց մը գտնել, վասն առաջարկութեանս վը-
րաց կը պնդեմ, վասն զի նախ զխտնով պէտք
է թէ՛ իւրաքանչիւր թաղ ի՛նչ հասցիք ունի
և կրնայ տալ 0/0 3ը, և այդ՝ Քաղ. ժողովն
միայն կրնայ զիտնալ ու մեզ տեղեկութիւն
բերել. վասն զի վերջապէս կրօնականք հաչ-
ւոյ մարդիկ չեն :

ՍՐՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ես ալ մինչև մէկ
ատիճան համամիտ եմ Փախագեան էֆ.ի ա-
ռաջարկին, վասն զի որքան ալ որ չխլաւատա-
կեցինք մեր տեղեկագրին մէջ, սա անհերքելի
է թէ՛ քանի որ խնդրոյն մէջ զրամական մաս
մը կայ, Վարչութեան Գաղաթական ժողովոյ
բովն անցնելու է այդ կէտը: Ուստի կը կար-
ծեմ թէ կրնանք նախ ընդհանուր կերպիւ վի-
ճարանի ընծայարանի խնդրոյն վրայ և ուրոս
հաստից հոյցով այն մաս եղանակը յղել Քաղ.
ժողովոյ քննութեան :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կողմով նմա յա-
ւելուլ թէ՛ ինչ որ ալ լինի, ընծայարանի մը
հաստատման պէտքն անվիճելի է: Սոսճմանս
զրութիւնը սրարտը զրած է կրօն ժողովին
վրայ եկեղեցականներ պատրաստել և երբ
այդ նպատակաւ Սա կուգայ մեզմէ զրամ՝ ա-
ղելու և մենք մերժենք, վասն իրաւունք կու-
նենայ հրամարելու: Եթէ Համարակալու-
թեան Գիւսանը համակերպէր, և նախկը չարտի
ընէինք Գաղաթական ժողովին յղել, բայց
քանի որ անգործադրելի կը նկատուի ցոյց

արուած միջոցը, Գաղաքական ժողովին ղիմե-
լու ենք նոր կարծիքն ստանալու համար :

Տ. Խ. ԱՐԲ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՏ. — Տեարբ
երեստիտանք. Ընծայարանի խնդրոյն վրայ եւ-
ղած դիտողութեանց պատասխանները համար
խօսք կ'առնու՞մ ոչ միայն իրր երեստիտան,
այլ նաև իրր ներկայացուցիչ Կրօնական Ժո-
ղովը . . .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — (Ընդմիջմամբ) Ու-
րեմն կը փափարինք որ ժողովոյս բացման
ողահուն ներկայ գտնուինք հոս :

Տ. Խ. ԱՐԲ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՏ. — (Շարու-
նակելով) Որոյ հեղինակութենէն բղխած է
այս խնդիրը և որ տմանց կողմէ կը նկատուի
այսօր իրր Գաղ. ժողովոյ ստորադաս մարմին
մը, բան մը՝ որ զլխովին հակառակ է Սահ-
մանադրութեան . . .

ԱՏՆՆԱՊԵՏ ԷՃ. — (Ընդմիջմամբ) Նե-
րեցէք ինձ յիշեցնել Ձեզ, Սրբազան, թէ Կրօ-
նական ժողովոյ նկատմամբ ընտ. այդ տեսակ
ակնարկութիւն մ'ընող չեղաւ հոս :

Տ. Խ. ԱՐԲ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՏ. — (Պա-
տասխանելով) Թէև ոչ յայտնի, բայց Ձեր
խիղճն ալ կղգայ, Ատենապետ է՛ք. թէ քո-
ղարկեալ կերպիւ այդ տեսակ ակնարկութիւնք
եղան :

ԱՏՆՆԱՊԵՏ ԷՃ. — Ո՛չ յայտնի և ո՛չ ալ
բողարկեալ կերպիւ այդ տեսակ ակնարկու-
թիւնք տեղի չունեցան :

Տ. Խ. ԱՐԲ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՏ. — (Շա-
րունակելով) Կրօն, ժողովն այնքան աղտոտ է
իւր գործառնութեանց սահմանին մէջ, որքան
աղտոտ է Քաղ. ժողովն :

Մեծ զարմանք կզգամք ուրեմն տեսնե-
լով որ Կրօն, ժողովէն եկած խնդիր մը իւր
համահաւասար մարմնոյն յղել կ'առաջար-

կուի. բայց այսքան յառաջ երթալէ առաջ,
պէտք է յիշել թէ այս Ազգին գլխաւը Կրօնա-
կան մ'է, թէ այս Ազգը Կրօնականներով միայն
կը ներկայանայ Տէրութեան առջև, թէ այս
Ազգի անցեալն ու ներկայն յանձնուած են
Կրօնականաց և արարչոյն Կրօնականներով
պիտի փրկուի. այս ամէնը պէտք է լաւ նկա-
տողութեան առնուլ, ո՛չ եթէ յօգուտ Կրօ-
նականաց այլ յօգուտ Ազգին: Երեստիտանա-
կան ժողովք պէտք չէ դէմ կենայ Կրօնական
ժողովոյ խնդրանաց, այլ ընդհակառակն պոր-
տի ձեռք տալ անոր և զիրու թիւններ ընծա-
յել . . .

ՋԱՏՆԵՐ. — Սխալ կը մեկնէք եղած ա-
ռաջարկն :

(Ջանազան նստարաններէ ընդմիջումներ)

Տ. Խ. ԱՐԲ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԷՏ. — (Շա-
րունակելով) Ո՛չ, սխալ չեմ մեկնէր. մեր
ուռաջարկին դէմ՝ անուղղակի կերպիւ խօսող-
ներ և զոտն այս նպատակաւ :

Պէտք է որ խնդիրը իւր ամբողջութեամբ
միճարանութեան ենթարկուի և ես պատրաստ
եմ պատասխանելու ամեն հարցմանց : Արդէն
չա՞տ լակ երկարեցաւ, և եթէ այսպէս Յու-
լիան նկատողութեան առնուլ ինչ որ փետրը-
վարին կը խնդրենք, կրնար ըվրանել թէ ո՛ր-
քան կը կասին Վարչութեան դարձերը :

Գաղով Փափաղեանն է՛ք. ի առաջարկին,
տարակոյս չունինք թէ Քաղ. ժողովոյ մեր ազ-
նիւ սաշտոմանկիցք ամեն դիւրութիւն պիտի
տան մեզ Ընծայարանի ծրագրին գործադրե-
ման համար, ինչպէս տուած են իրենց նա-
խորդք ամեն առթիւ, սակայն չենք կրնար
ընդունիլ որ այս բանիս համար պայման զըր-
ուի Կրօն. ժողովն ենթարկել Քաղ. ժողովին :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՃ. — (Ատենապետ Քաղ-
ժողովոյ) Կրօնական ժողովոյ Ատենապետ
Սրբազանը նախ կուզէ մեր արտադրութիւնն
հասկնալ. ոչս մտոյն կարծեմ և ոչ լակ արտ-
հովութիւն տալու հարկ կոյ, քանի որ Վար-

չութիւնս կազմող երկու մարմիններս ալ հասանալով թեմար և փոխադարձ օժանդակութեամբ աշխատելու յօժար ենք յողուտ Ազգին : Կէտ մը կայ սակայն զոր հարկ է լուսարանել : Ընծայարանի առաջադիրն նկատմամբ մեր կարծիքը լսելուց կը հրոտական ժողովք Քաղ. ժողովին երթարկել չըշանակիր : Երբ եկեղեցւոյ պատմութեան մէջ՝ աւելի բարձրագոյն խնդիրներու համար եկեղեցականաց հետ աշխարհականաց ալ մասնակցութիւնը տեսնուած է ստէպ : Ընծայարանի բոցման հարկը կողմնը տաներս ալ, միայն թէ՛ բանի որ խնդիրը անտեսական մաս մ'ալ ունի, ըստեցտու իրաւամբ թէ՛ փոխանակ վեղարքի, Թեոսով մարդ մ'աւելի աղկի կընար զբարիլ աւնով . ապային աշխարհականաց ժողովոյ մը այս մասնակցութեանն տարբեր մեկնութիւններ հանել ճշմարտութիւն չէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքն Մէրեմ-Գուլի էֆէնտիին է :

Տ. Ն. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՏ. — Ե՛ս խօսք ունիմ իրրև Տեղեկարեք կրօնական ժողովոյ :

ՄԵՐԵՄ-ԳՈՒՂԻ Յ. ԷՖ. — Եմէ կարելի է, կողաչեմ որ Նար-Պէյ Սրբազան հաճի զիս ալ լսել, և ըստ այնմ ամենուն մէկանց պատասխանել :

Տ. Ն. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՏ. — (Առ Մերեմ-Գուլի էֆ.) Ո՛չ, ես չեմ ուզեր մտիկ ընել զձեզ, այլ կուզեմ պատասխանել Քաղ. ժողովոյ Ատենապետ էֆէնտիին :

ՄԵՐԵՄ-ԳՈՒՂԻ Յ. ԷՖ. — Հրամեցէ՛ք Սրբազան, բաւական է որ իմ և Ձեր խօսքերը հաս կը լսուին և կարձանազրտին . . . :

Տ. Ն. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՏ. — (Շաբունակելով) Քաղ. ժողովոյ Ատենապետ էֆէնտիին ըսածները ճշիւ են, բայց պէտք է զիտնալ թէ կրօն. ժողովը անտեսական մասն

ալ սերտած է և այնպէս կը բերէ Ձեզ խնդիրը : Նախ և առաջ սկզբունքը պէտք է որդատի յաստի կրեւտականութեան, և ապա յղուի Քաղաքական ժողովին, նորա կարծիքն ստանալու համար : Եթէ այսօր, անտեսական մաս կայ ըսելով կողմը խնդիրը յետաձգել, ուրիշ բան չէք ընէք, այլ եթէ մերժել մեր ժողովին :

ԱՏԱՅԵՐ. — Սխալ կը մեկնէք ժողովոյ կարծիքը :

Տ. Ն. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՏ. — (Շաբունակելով) Ընդունեցէ՛ք նախ սա սկզբունքը թէ խրատունչիւր թաղի եկեղեցւոյ հասցեթէն մաս մ'առնուել պէտք է Ընծայարանի հաստատման համար, և թող զարծր մնայ բունակութեան վրայ, և երբ ուզէք, ազատ էք Քաղ. ժողովոյ կարծիքն առնուել այդ մասին, գուցէ փոխանակ 0/10ն 3ի, 0/10ն 1-2 կամ տասը պիտի սայ . . .

ՓԱՓԱԶԵՍ Ս. ԷՖ. — (Ընդմիջելով) Գուցէ բնաւ չպիտի սայ և վանկարու եկամուտները ցոյց պիտի տրուին, որք երեսի վրայ թողուած են :

Տ. Ն. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՏ. — Կըսուի թէ՛ թեմուս վանքերու հասցեթ պիտի յատկանան : Ուրեմն չէ՛ք ուսումնասիրած մեր ծրարագիրն, արարել ցատիկ է այս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրուի Ատենաբան Սրբազանին որ հաճի կանխակալ կարծիքներ չ'յայտնել և զգուշանայ միանգամայն վիճարանութեան շրջանակին դուրս ելնել :

Նար-Պէյ Սրբազան կը պիղծէ իւր սուաւ ջարդիկն վրայ թէ պէտք է կրօն. ժողովոյ ցոյց տուած հասցեթն սկզբամբ ընդունել . բայց ինչպէ՞ս կարելի է ընդունել քանի որ իւր Համարակալութեան Դիւանն այս առաջարկ անիրանալի կը գտնէ : Ուստի մինչև ցարդ արտայայտուած կարծիքն է այն պարագայի

մէջ, խնդրոյն գրանցուածն մտաք Քաղ. Ժողովին յղել և անոր կարծիքն լսել յետոյ զարժանն անորինէ, և Հետևապէս վիճարանութիւնըն ինքնին սոյն շրջանակին մէջ պարտադրուած լինելով այժմ, կը խնդրեմ որ Առեւտրան Արտոյնը յօժարի նոյն շրջանակէն զուրս չի հանել խնդիրը :

ՍՐՂԱՋԱԵԱՆ Կ. ԷՅ. — Որչափ փափաքելի էր որ Կրօն. Ժողովոյ Առեւտրու Արտույնը կամխաղ կարծեար շիտէր և խնդրոյն վրայ բոլոր կարծիքները լսելէ յետոյ ըստ այնմ պատասխանէր, որով վիճարանութիւնն ալ արդիւնաւոր ճամբու մը մէջ մտնէր :

Յ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՅ. — Ես բընաւ հարկ չեմ տեսներ պատասխանել Արվածեան էֆ.ի և դատնալով վերստին խնդրոյն, կատաճարկեմ նախ խնդրոյն սիւղուներն քուէարկել և ընդունիլ :

ՄԵՐԵԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Ձեմ կարծեք որ մեղադրէր զիս, երբ ըսեմ թէ մարդուս համբերութիւնը կը հատնի վերջապէս՝ տեսնելով թէ որչափ կերկրատրանեն, այնչափ ունի կը կնճատեն ամենարար խնդիր մը, և մինչև իսկ անոր զոյնը կիմտովին կը փոխեն: Երեսօրօրաններէն օմանք կրնան հիւանդութեան պատճառաւ խնդիրն առաջնասիրած չը լինիլ. կամ այս ու այն պարագայն յիշողութեան վրայեցնել. կըմբռնեմ զայս. բայց չեմ կրնար ըմբռնել երբ առաջարկութեան տէր ներկայացող պատիտանի անձնուորութիւններ փոխտնակ խնդիր պարզել ջանարու, անհիմն ենթադրութեամբ յարկտակուելով օգին մէջ պտտեբազմ մընչու չափ յատմ կերթան. և այդ յուղման մէջ այնպիսի սիւղուներներ յայտարարելու կեննեն, որոյ պատասխանելու համար եթէ խնդրէն բոլորովին չեղիլ հարկ չլինէր. ըստ բան ունիւնք ըսելու: Ուստի խնդրոյն վրայ յիտելէ առաջ պէտք է ըսեմ թէ՛ այն յայտարարութիւններն չեղած են չլուած կը համարիր: . . :

Յ. Խ. ԱՐՔ-ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՅ. — (Ընդմիջելով) Կը խնդրեմ, Առեւտրու էֆ. հաճեցէք գիտել տալ Առեւտրան էֆ.ի որ պաշտօնական անձանց զէմ այդ տեսակ վերալ մը չը խառնիր Պէտք է գիտնալ թէ՛ օգին մէջ պատեբազմ մընչ չկայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ձեմ կարծեք թէ՛ Մէրէմ-Փուլի էֆէնտի արտասանեց այն տեսակ բառ մը որ Խորէն Արարականի անձնատրութիւնն վիրաւորէր: Ետեւտակեցէք Մէրէմ-Փուլի էֆէնտի :

ՄԵՐԵԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՅ. — Ենթահաղկեմ, Առեւտրու էֆէնտի, որ Ձեր ծանուցեալ անձնապատկեամբ կարեորութիւն չէք ընծայեր Նար-Պէյ Արարականի դիտողութեան, և հարկ չէք տեսներ ազդարարութիւնն ուղեւրու առ իս: Ուստի խառնութեան ձեռք առնելով միանգամ ես կը կրկնեմ թէ՛ ցուպի կը որ խնդրոյն տէր հանդիսացողներն երթաւ գրութիւններ ստեղծելին ըստ բնուց, և անոնց վրայ յիշով իրենց փաստերն՝ օգին մէջ պատեբազմ մընչին :

Երբ խնդիրն իր պարզութեան մէջ նկատողութեան առնուի, բնաւ տեղի չիմար յուղուելու և իրաւասութեան փոխողներ չըմարելու: Եթէ փոխողեան էֆ.ի առաջարկէն ծագեցաւ այդ կատակներ, բոլորովին սխալ ըմբռնուած է այն առաջարկ: Փոխողեան էֆ. չըստ թէ՛ ըստ որում Կրօն. Ժողովը Քաղ. Ժողովոյ իրաւասութեան ներքեւ պ, ուստի պէտք է խնդիրը Քաղ. Ժողովին յղել. այլ պարագայս առաջարկեց բերուած ծրագրին անունստիան մասին վրայ Քաղ. Ժողովին կարծիքն իմանալ նախապէս, մանաւանդ որ, յարեց, մեր Նախաքննիչ Գիւսանը մեղմողական կարծիք յայտնած է Կրօն. Ժողովոյ առաջարկին դրամական մասին նկատմամբ: Հետևաբար փոխողեան էֆ. Կրօն. Ժողովն Քաղ. Ժողովոյն ստորադասել չուղեց, այլ ընդհակառակն հաստատել ուղեց թէ՛ Կրօն. Ժողովն անկախ իրաւասութիւն ունի իր սահմանին մէջ, ինչ-

պէս որ Քաղ. Ժողովն ալ միակ ձեռնհասութիւն ունի իւր իրաւասութեան վերաբերեալ խնդրոց մէջ, որոնցմէ է ամեն դրամական եւ Տնտեսական խնդիր :

Եւ միմէ մեր եկեղեցեաց հասցիկից մէկ մասը գրաւելու խնդիր է կրօն. Ժողովոյ մեզ բերած առաջարկն, թէ Ընծայարանի հաստատման խնդիր. պէտք է ըստ հասկացոյ : Եթէ Ընծայարանի խնդիր է, ինչու՞ ուրեմն ստիպմամբ կը պահանջեն մենք որ Պօլսոյ թաղերուն հասցիկից մէկ մասն յարկացնել որոշեմք այժմէն : Ասիցց զատ ի՞նչ պատճառ ունին ենթադրելու թէ Ընծայարանի հաստատման խնդիրն ի բաց մերժելու տրամադրութիւն ունեցած լինէին Երեսօրիսանք . թէ և Ընծայարանի հաստատման ձեռն մասն իսկ վիճարկութեան պէտք է ենթադրուի, բայց ո՞վ էր մեր մէջ Ընծայարանի առաջարկին դժխօսողն, որ այդ ենթադրութեանց տեղի տար :

Մենք գո՛հ ենք որ մեր կրօնական Ժողովը զգացեր է այսպիսի հաստատութեան մը պէտքն, սակայն որչափ առաւել գո՛հ պիտի լինէինք, եթէ կրօն. Ժողովը Գեր. Առեւտարանն եւ Քաղաքական Ժողովոյ Վսեմ. Առեւտարանին նման տաանց յուղման և հանդարտութեամբ խօսելով պարզեր խնդիրն իւր խկական սահմանին մէջ, և յայտնուած կարծիքներն սխալ իմաստով չմեկնէր : Այգ. Ժողովն ի՞նչպէս կրնար գիտնուլ թէ՛ մեր թաղերին որոնց հասցիկներն իրենց ծախքին աւելին են, և որոնցն անբաւական են իրենց անհրաժեշտ պիտոյց . թէ ի՞նչ չափով ի Տարիկն մաս կրնայ առնուլ անոնցմէ Ընծայարանի համար, և թէ՛ այդ մասին պահեստովն ի՞նչ հետեւոր կը ծագի : Այս կէտերը ըստարանող վիճակացոց տարտակ մ'ունի՞ր պտարտած մեր կրօն. Ժողովն : Տարակից չկայ թէ դրամական այս խնդրոց մասին մեր նորընտիր Քաղ. Ժողովոյ խորհուրդ պէտք է հարցնեմք, անհրաժեշտ գործողութիւն մը, որոյ պէտք ունինք այնպէս՝ որովս պէտք պիտի զգայինք զիմելու կրօն. Ժողովը կարծեաց, որ Քաղաքական Ժողովը հաւատարեաց վերաբերեալ առաջարկ

մը բերեր մեզ : Մենք այժմ խնդրոցն դրամական մասին նկատմամբ Քաղ. Ժողովոյ կարծիքը կուզենք . և երբ Քաղ. Ժողովն աննպաստ կարծիք յայտնէ ու կրօն. Ժողովն այդ կարծիքն հերքելու փաստեր ունենայ, յայնժամ կը լսենք իւր առարկութիւններն, և կը խնդրենք որ Պօլսոյ Թաղերուն ելեւտոյց վիճակացոյցն ի ձեռին համոզէ զմեզ ընդդէմ Քաղ. Ժողովոյ կարծեաց :

Իսկ արդ՛ կրօն. Ժողովն Ընծայարանի մը հաստատութիւնը կառավարիչ Ժողովոյ, մենք կընդունինք սկզբամբ աղոր պէտքն, բայց զի տակցարար վիճարանելու և գործադրելի և զանազ մ'որոշելու համար հարկ կզգամք խնդրոցն մէկ մի մասին վրայ ձեռնհաս մարմնոց կարծիքն իմանող նախապէս : Այս է խնդիրն իւր պարզութեան մէջ, և տեղի չկայ տարբեր տեսակետով նկատել զայն ու այնպիսի յայտարարութիւններ ընել, որք փոխանակ զիւրայնելու՝ դժուարութեանց կը մասնեն խնդիրն :

S. Մ. ԵՊՈՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Այնքան ճարտարութեամբ չեմ ներկայանար խնդիրն պարզելու Պատի. Ժողովոյց, որքան ճարտարութեամբ բերուա Փափաղեան ԼՅՅԼԻՍի զիւր առաջարկ :

Նախ խնդիր է զիմանլ թէ ինչու՞ կրօն. Ժողովն Մայրաքաղաքիս թաղերու հասցիկից 0/10ն չը առնուլ կուզէ Ընծայարանի ծախսոց համար և ուրիշ աղբիւրի չլիմեր, զո՞վ պիտի կրիմէ հան, եթէ ոչ այդ եկեղեցեաց վրայ ձեռնադրելի քահանայներ միայն . ինչպէս որ ամեն թաղ կը հոգայ իւր եկեղեցոյն և զըպրոցին պիտոյքը, նոյնպէս և արէտք է հոգ տանի իւր քահանայն հասցնելու և այդ ծախսոց համար բոժին մը հանէ եկեղեցոյց հասցիկներէն :

Խնդիրն երբ հիմն քննեմք, պիտի տեսնենք թէ այս Ընծայարանի առաջարկը նոր չէ. 1863ին, երբ Առհմանադդեանն առաջին Վարչութիւնը կազմուեցաւ. ընդ նախադասութեամբ Պօլսոս Պատրիարքին, Հոգեւոյս Ներսէս Պատրիարք, որ այն ժամանակ կրօն. Ժողովոյ Ա-

անհասկան էր, Բնծայարանի բացման օրու Տօպիքի բերան այս ժողովին, այն ատեն ալ ըսին թէ՛ խելիք որ դրս նոյնս կողմ՝ ունենալով Քաղ ժողովին յրա ելա էր, և ահա բըսաներկու տարիներ անցան ու տակաւին անգործագրելի իր մնայ այդ ծրագիր և կը բաղկնի զժողովութեանց և ներքեւ Պատրիարք թէ՛ պետ մասամբ ի գործ գրած էր զայն, սակայն կէս միջոյններ աւելնալով իւր ձեռք ք շէր կըրցած լիովին նորոտակի համարիչ և Այժմ կու գանք Ձեր լարք ուշագրութիւնն հրատարել ներկայ առաջարկի վրայ որոյ նպատակն է իւրաքանչիւր թաղին յաճանակներ պատրաստել: Գիտարներ եղան թէ՛ ինքեւս ժողովն Բնծայարանի հաստատութեանն համար վարձանակ նկերկեաց հասցիմ ցոյց տալու ուրիշ աղբիւր մը ցոյց տայ: Սակայն չարի է զրոտել թէ՛ այդ միջոցը ցոյց տրուած է սա մտածմամբ որ՝ քանի որ ամեն թաղ իւր եկեղեցւոյ հասցիք կը յատկացնէ թաղին Ազգայնոց կըրթութեան, բանտար է որ անկից բաժին ժողով հանէ իւր բաժնուայն հասցնելու և զայն գաւտարարելու համար և Այսու հանդերձ, ինչպէս ըսած ալ ենք մեր գրայն մէջ, կրօնական ժողովս զո՛ւ պիտի մնայ, և թէ՛ Պատիկ Երես վարձանակիւնը կարենայ ցոյց տալ մեզ ասէ լի ապահով հասցիմ մը, որպէս զի վարձով գործադրութեան գորտի Բնծայարանի հաստատման առաջարկն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Կը ցուտիմ որ Խլւ միջոտն Սրբազան գուրս երած էր այն որս հանէ երբ այս խնդրայն վրայ նախնական վիճարանութիւն մը առդի ունեցաւ, որով և կը կործէ թէ՛ ճարտիկութեամբ կուզեն խնդիրք այս ժողովին գուրս հանել: Ես Բնծայարանի հաստատութեան ամենէն առեկի փոխարարչներն միւր եզրած եմ սկիզբն ի վեր, և նայն իսկ այս բեմէն յաճախ երկայն բանտարտութիւններ բըսած եմ Բնծայարանի կարիքութեանն հասցնելու համար, ուտոի ի՛նչ վերադրուած զխտողութիւնն բըրբորվին անտեղի է:

Այժմ դառնալով բուն խնդրայն, պէտք է զրոտել թէ՛ կրօնական ժողովն Պօղոց թաղերու համար բաժնուայ հասցնելու առաջարկ մի՛ է որ կը ըսերք մեզ, մինչ շահարակութեան Կիւսանը յառաջ գնուցած է վարդապետ հասցնելու խնդիր ալ ըմբանելով այդ ծրագրայն մէջ: Բնծ է թէ՛ Երեւոտիօնանութեան կողմնումն տրամադրութիւն կայ պէտք եղած առաջարկութիւնը ընծայելու մեր Գերբ պօղոտո նակցոց, միայն թէ՛ անգամ մը որ կրօնական

ժողովը այս ատենը ընտր իւր առաջարկն, և մենք նախարկելիչ Կիւսանի մը զրկեցնելը զայն, այնպէս ալ կրնանք նորոտակի քաղ ժողովոյ կործիրն անուղ դրամական մասին համար, առանց օրինաւորութեան չեղած լինելու:

Եւ ես կը խնդրեմ մասնաւորապէս որ, ինչ ալ ըլլայ ժողովոյս որոշումը այս մասին, և վարչական որ մարմնայն ալ յուրի Բնծայարանի առաջարկն, ամենէն առեկի հոգ տարուի գործադրութիւնն վարձանակն, և մինչև իսկ կը բարեմաղթեմ որ կրօնական ժողովը ժամ առ ժամ վարդապետներ հասցնելու համար ևս ծրագիր մը բերէ, զման զի կանանաւոր վարդապետի ալ տով անկիք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Վիճարանութեան ուղղութիւնն ցոյց կուտայ թէ՛ այսօր շարտի կրօնական կըրթարկութեան մը հասնել, մասնաւոր թէ՛ ժողովոյս վարձանակն որոշուած ժամն ալ եկած հասած է: Աւտոի վիճարանութեան շարձանակութիւնը կը մնայ յաջորդ նոտին և մինչև այն ատեն Քաղ ժողովն ալ միջոց կուենայ խնդիրն ուսումնարարելու և իւր կործիրն յայանելու, որով այն միջոգէն ինքին կը վարտի:

ՋԱՅՆԵՐ. — Սյո՛, այո՛:

Բողոմոտիւ Երեւոտիանը ձայնակցելով Գիւտնի առաջարկութեան, ԿՐՈՆՈՒԻ վիճարանութեան շարձանակութիւնն թաղու յաջորդ նոտին, և ներկայացնելով առաջարկութիւնը ըրողեւ առ նորոտակով Քաղ ժողով, որպէս զի գրամական մասին վրայ ինչոն ևս իւր կործիրն ներկայէ առ Ազգայնի ժողով մինչև յառաջիկայ նիստ:

Գ. Բացակայութիւնը
 Երեւոտիաններէ՛
 Բարսեղ էֆ. Նորաճեան
 Յակոբ » Նաճեան
 Մկրտիչ » Գաղանճեան
 Պօղոտ » Երեւոտեան

Ժողովոյ այս օրեայ նիստն Երրորդ բացակայութիւն ունեցած լինելով, ԿՐՈՆՈՒԻ յաջորդ նոտի համար յատուկ կը շնազիր յղել այնպէս:

Ատենան կը վերնայ ժամը Յին, յաջորդ նիստը 15 օրէն զուտարելու որոշմամբ:

Ատենազայիր Ատենապետ
 Յ. ԳՈՒՐԳԵՆ Տ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

Ն Ի Ս Տ Ձ.

19 ՅՈՒԼԻՍ 1883

ԱՁԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԵՐ

ԳԵԻՐՈՆԱԿԱՆ, ԵՐԵՍՓՈՒՆԵՐ

ՅՅՆՆԱԿԱՆ

Ա. Վիճակ

- 1 Միմէօն Եպս. Սէֆէրեան
- 2 Արիստակէս Եպիս. Դերձակեան. Բ
- 3 Գէորգ Վրդ. Ի թիւճեան
- 4 Խաչատուր Քան. Տ. Գարրիէլեան. Բ

Բ. Վիճակ

- 5 Խորէն Արքեպիսկ. Նոր-Պէյ
- 6 Մատթէոս Եպս. Իզմիրեան
- 7 Յովհաննէս Քան. Մկրեան Բ Պ
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ Պ

Գ. Վիճակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փափաղեան Բ Պ
- 10 Խորէն Քան. Փէշիվանեան Բ 2
- 11 Ոսկի Քան. Օնանեան
- 12 Յովհաննէս Քնյ. Շաշպաղեան

Դ. Վիճակ

- 13 Եղիշէ Վրդ. Այվազեան
- 14 Յովհաննէս Վ. Արշարունի
- 15 Սահակ Քնյ. Սարգսեան Բ Պ
- 16 Վահան Քնյ. Իրիգրեան

Ե. Վիճակ

- 17 Յովսէփ Վարդ. Այվազեան
- 18 Գարեգին » Թաթարեան
- 19 Սուքրաս Քան. Ստեփանեան Բ 2
- 20 Գարրիէլ » Խանճեան Բ

- Ս Բաղակայութիւն առաջին :
- 2 » Երկրորդ :
- Պ » Զանաւոր պահառու :

աստիճանք

Ա. Վիճակ

Գում-Գարու, Կետիկ-Վաղա-
Է. Գում-Գարուի դուրս

- 21 Յակոբ Գուրգէն
- 22 Յ. Մէրեմ. Գուլի
- 23 Մինաս Չերազ Բ Պ
- 24 Խաչիկ Կանաւարական Բ 2
- 25 Միհրան Վարդազարեան
- 26 Մկրտիչ Կիւրճեան Բ
- 27
- 28
- 29
- 30
- 31
- 32
- 33
- 34
- 35
- 36
- 37

Բ. Վիճակ

Պէշիկըաշ

- 38 Բարսեղ Հալաճեան Բ 3
- 39 Յովհաննէս Քէրէտեան Բ
- 40 Մեղքան Գարսիկեան Բ
- 41 Մարուգէ Յրէնիկեան Բ Պ
- 42 Պօղոս Էնքալրճեան Բ 3
- 43 Յակոբ Պօշտակեան
- 44

Իւսկիւտար Ս. Խաչ

- 45 Միմէօն Ֆէլէկեան Բ Պ
- 46 Գարրիէլ Նորատուճեան Բ Պ

47 Գասպար Գասպարեան
48 Գրիգոր Զիթեան

Իւսկիւտար Ս. Կարապետ

- 49 Պօղոս Թորգոմեան
- 50 Տրդատ Փափաղեան
- 51 Յակոբ Հաճիեան Բ 3
- 52 Միհրան Սէթեան Բ Պ

Գ. Վիճակ

Գասըմ-Բաղա

- 53 Գասպար Չերազ Բ Պ
- Բերա
- 54 Ղրիգոր Աջիւրյէճեան Բ 3
- 55 Ղազար Հօյնեան
- 56 Յարութիւն Պէկեան
- 57 Նշան Պօյաճեան
- 58 Վլչէն Սրեանեան
- 59 Մինքեթիմ Մանուկեան
- 60 Համարձու Մաղպուէ.
- 61 Մանուկ Ապանեան Բ 3
- 62

Միշաղիսդ

- 63 Տիգրան Եռաս ֆեան Բ 3
- 64 Մկրտիչ Գաղանճեան Բ 3
- 65 Մկրտիչ Հանրեան
- 66 Ստեփան Տաւատեան Բ
- 67 Յարութիւն Նորատուճ.
- Պէյրօզ Է. Ղալաքիա
- 68 Միշաղի Մամիկոնեան

Դ. Վիճակ

- Բուզկուճուճ Է. Իճաւիէ
- 69 Մկրտիչ Մէղրուբեան
- 70 Միհրան Մաքրատեան Բ Պ

Գատրցիւղ	Ա.Ա.Ռ.Ա.ԿԱՆ ԵՐԵՎՈՒ ԱՆՔ	Նիկոմիդիա
71 Գառնիկ Յովակիմեան	Ռ 2	120 Կարապետ Ս.Խ.Թիւճեան
72 Կարապետ Հազարեան	Ռ Գ	ԱԿԸ
Նարբը-Գաբու		121 Յակոբ Գորեան
73 Միհրան Տէօբաճեան	101	Ղարամիսար
Եկնի-Մանսիկ Սամարիոյ	402	122 Կարապետ Երէցեան
74	Ատանա	Արաբկիր
Թօփ-Գափու	103	123 Կարապետ Խաչիկեան
75 Յարութիւն Թրեաքեան		Բաղիշ
Էլուպ Ս. Նիլա և Ս. Աստուածածին	104 Մտաթէս Ալէքսանեան	124 Արփիար Արփիարեան
76	Եօզղատ	Գ. Վիճակ
Գուրու-Չեշմի	405	Թեքիրտաղ
77 Կարապետ Արժանեան	406 Գէորդ Վարդանեան	125 Տիգրան Գ. Մինանեան
Հիսար և Պոյաճի-Գիւղ	107	Կեսարիա
78	Եգիպտոս	Խարբերդ
Նոր-Գիւղ և Սրեկիա	108 Աբրահամ Մուրառեան	427
79 Աւուր Տէմիրճիպաշեան	Ռ. Վիճակ	Պալքրեհեր
Պարստ	Պրուստ	128 Ստեփան Գօշգիւն
80 Մկրտիչ Կրկուշեան	109 ՔրիստոստարՂազարոսեան	Մուշ
81 Ռէթէս Թաղէտեան	Ե. Ղոկիա	129 Ստեփան Փափաշեան
82 Ներսէս Երէցեան	110	Տիլիկ
Քարակեօմրիկ	Ամասիա	130 Նշան Գարաջաշ
83 Յովաննէս Թորոսեան	111 Համարձուժ Ալանեան	Զէյրուճ և Մարաշ
84 Կարապետ Փանոսեան	Բալու	131 Տրապիզօն
Ե. Վիճակ	112	132
Սամարիա	Եգեսիա	Ե. Վիճակ
85 Յակոբ Արշակ	113 Յակոբ Խեթիւճեան	Պաղտատ
86 Յովաննէս Նուրեան	Մանճրլիս	133 Կարապետ Ալթիան
87	114	Տիգրանկերտ
88	Հունքն	134 Միհրան Զօյանեան
89	115	Վան
90	Երզնկա	135 Մարկոս Աղաթէղեանց
91	416 Ռեթէս Պէրպէրեան	Սիրամար
92	Գ. Վիճակ	136
93	Կարին	Հալիպ և Այնբապ
94	117 Երմիշ Ազնուօրեան	Սեբաստիա
95 Ռուբէն Պաշիպաշեան	Քիօրանես	138 Մկրտիչ Ս. Մէլիբեան
96 Նիկողոս Թիւրքէնաճեան	118 Ալեասիա Թընկերեան	Ռուսնուղ
97 Նշան Փափաշեան	Ազրիսուսպոլիս	139
98	119	Բարբերդ
99		140
100		

ԱՋԳԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿՍԱՐԲ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

1.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա. Արեւադէր
2.	»	Սիւնն	Եպս.	Սէֆէրեան	Բ. »
3.	»	Մասիւն	»	Իզմիրեան	
4.	»	Գարեղին	Վրդ.	Թաթարեան	
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա. Արեւադէր
6.	»	Տաճատ	»	Ռակմեան	Բ. »
7.	»	Յակոբ	»	Ա. Փոփաղեան	
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի	
9.	»	Յովհաննէս	Քհյ.	Մլրեան	
10.	»	Սահակ	»	Տ. Սարգսեան	
11.	»	Սուրբատ	»	Ստեփանեան	
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան	
13.	»	Խորէն	»	Փէշիվանեան	
14.	»	Կարապետ	»	Սէվեան	

ԱՆԿՍԱՐԲ ԲԱՂՎԱԲՈՒՆ ԺՈՂՈՎՈՑ

1.	Յովհաննէս	Էփէնտի	Կուրեան	Ա. Արեւադէր
2.	Գարբիէլ	»	Նորատունկեան	Բ. »
3.	Համադասպ	»	Պաղարեան	Ա. Արեւադէր
4.	Յովհաննէս	»	Պոլսեան	Բ. »
5.	Արիկ	»	Ռանճեան	
6.	Ալիքսան	»	Սարսեան	
7.	Խաչիկ	»	Կամարական	
8.	Կոստանդ.	»	Կոստանդեան	
9.	Միհրան	»	Սէվեան	
10.	Յակոբ	»	Փրէնկեան	
11.	Սերովբէ	»	Կիւլպէնկեան	
12.	Սիննքերիմ	»	Մանուկեան	
13.	Տիգրան	»	Բարադամեան	
14.	Տիգրան	»	Կիւմլիչկերտեան	

ԳՆՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Օ Ր Ս . Կ Ա Ր Գ

- Ա. — Ատենական դործողութիւնք .
1. — Բացակայութիւնք .
 2. — Վաւերացումն Գ. և. Գ. նիստերու ատենադրութեանց .
 3. — Երեսօխտանական հրատարակիչ Կ. Է. Բ. կիւրճեանի
 4. — Յայտարարութիւն յԱտենապետէ նորակազմ Քաղ. ժողովոյ .
 5. — Պաշտօնագիր Ս. Պատրիարք Հօր յաղազս վերաքննութեան Ազգ. Սահմանադրութեան .
 6. — Տեղեկագիր Համարատուութեան Ազգ. կեդր. վարչութեան կրօն. ժողովոյ .

ՄԻՋՍ.ԳԷՊ

- Բ. — Վերակազմութիւն Խորհրդարանական Յանձնաժողովոյ . վասն դործոց և. պարտուց Ս. Երուսաղէմի
- Գ. — Տեղեկագիրք նախաձեռնութեան և. Համարակալութեան Գիւանաց վասն հաստատման մի Ընծայարանի .
- Գ. Բացակայք

